ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Տաշիր համայնքի մարզադպրոցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/108» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Տաշիր	«15» «օգոստոսի» 2019թ ժ 10:00
Մասնակցում էին՝	
Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)՝	Ն. Մուրադյան
Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԳԱ)	Ս. Սուքիասյան, Հ. Կիրակոսյան
Գնման պատասխանատու/Մրցույթի Համակարգող (ԳՊ/Մհմ)	Ս. Սարգսյան

1. **«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/108» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցին որոշելու մասին**

/Ն. Մուրադյան/

1.1 «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/108» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «Այպոշին» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/108» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցման մասին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված դրական եզրակացությունը.

Հանձնաժողովը որոշեց

1.2 Հիմք ընդունելով գնահատման թերթիկները հաստատել «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/108» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտերի գնահատման արդյունքները և հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակցին:

1-ին չափաբաժնի համար ընտրված մասնակից ճանաչել «Այպոշին» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել հինգ օրացուցային օր /16.08.2019թ-20.08.2019թ./: Անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Այպոշին» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. **Ընթացակարգի արդյունքների ամփոփման հանձնաժողովի նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

/Ն. Մուրադյան/

2.1 «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/108» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ հաշվետվության հաստատման, արդյունքների ամփոփման

նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրը ժամը 10:00-ին ք. Տաշիր, Վ. Սարգսյան94, Տաշիրի համայնքապետարանի վարչական շենք, 206 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի		
Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)՝		Ն. Մուրադյան
Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԳԱ)		Ս. Սուքիասյան
Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԳԱ)		Հ. Կիրակոսյան
Գնման պատասխանատու/Մրցույթի համակարգող(ԳՊ/Մհմ)		Ս. Սարգսյան